ԱԾԱՆՑՈՒՄԸ ԳՈՐԻՍԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Մհեր Քումունց
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ
https://orcid.org/0000-0001-5496-3783
mherkumunts@gmail.com
Բաբայան Արինե
Հայաստան, Գորիսի պետական համալսարան, ուսանող
babayanarine42@gmail.com:
DOI: 10.54503/978-9939-970-08-0-201

Մեր ուսումնասիրությունը նվիրված է ածանցմանը և ածանցների քննությանը Գորիսի բարբառում: Ամբողջ ուսումնասիրության ընթացքում և յուրաքանչյուր ածանցի նկարագրության ժամանակ անհրաժեշտ ենք համարել յուրաքանչյուր ածանցով ներկայացնել համապատասխան օրինակներ և տալ դրանց բացատրությունները: Ուսումնասիրելով ածանցները Գորիսի բարբառում՝ տեսնում ենք, որ դրանք մի շարք նոր իմաստներ են հաղորդել բառերին և ունեն յուրահատկություններ: Գորիսի բարբառն ունի իր հարուստ ածանցման համակարգը, որի միջոցով հարստացել է բարբառային բառապաշարը:

Բանալի բառեր. ածանց, բարբառ, Գորիս, բառիմաստ, բառակազմություն:

Ներածություն

Հոդվածը գրելիս մեր նպատակն էր պարզել Գորիսի բարբառի ածանցման երևույթները և ածանցավոր բառերի բառակազմական, իմաստաբանական առանձնահատկությունները, հնարավորության դեպքում, ըստ հարցին վերաբերող լեզվաբանական գրականու-

թյան, տալ դրանց ծագումնաբանությունը, համեմատել այլ բարբառներում առկա տարբերակների հետ, հասկանալ, թե որքանո՛վ է Գորիսի բարբառը ինքնուրույն համակարգ, բարբառի բառապաշարի հարստացման գործում ի՛նչ դեր են ունեցել ածանցները: Առհասարակ քիչ ենք նկատում, որ ուսումնասիրվի որևէ բարբառի ածանցական համակարգը: Կարծում ենք, որ հայերենի բարբառներն ունի մի շարք յուրահատկություններ բառակազմության մակարդակում, և այդ մենք նկատում ենք ածանցների քննությունը կատարելիս: Գորիսի բարբառի ածանցների վերաբերյալ ուսումնասիրություն են կատարել Ա. Մարգարյանը «Գորիսի բարբառ» աշխատությունում, Մ. Քումունցը «Հականունության ձևավորման ածանցական միջոցները նույնարմատ և տարարմատ բառերում», «Գրաբարի անցյալ դերբայը բարբառային մի քանի բառերում», «Գորիսի բարբառը հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգման համատեքստում» հոդվածներում[1]:

Մեթոդաբանություն

Հոդվածը գրելիս առաջնորդվել ենք տարբեր մեթոդներով՝

Ա. Տվյալների հավաքագրում և աղբյուրների ուսումնասիրություն: Նախ՝ օգտվել ենք ածանցներին վերաբերող տեսական գրականությունից, ապա՝ կենդանի խոսքից՝ Գորիսի բնակավայրերի խոսակցական տարբերակներից, հարցումների միջոցով հավաքել

---

1 **Մարգարյան Ա. Ս.** *Գորիսի բարբառը:* Ե., Երևանի համալսարանի հրատարակչություն: 1975: էջ 570: **Քումունց Մ.,** *Հականունության ձևավորման ածանցական միջոցները նույնարմատ և տարարմատ բառերում,* 2019, էջ 15: **Քումունց Մ.,** *Գորիսի բարբառը հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգման համատեքստում,* Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ: Միջազգային գիտաժողովի նյութեր: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակչություն: Ե., 2022, էջ 314: **Քումունց Մ.,** *Գրաբարի անցյալ դերբայը բարբառային մի քանի բառերում,* Հասարակական գիտությունների հանդես, Ե., 2019, էջ 81-89:

ենք բավականաչափ բառեր։ Ածանցների ծագումնաբանական հարցերը ուսումնասիրելիս օգտվել են բառարանային և տեսական գրականությունից[2]։ Աղբյուրների ուսումնասիրության այս մեթոդը, կարծում ենք՝ կարևոր է, որպեսզի ճշգրտվեն Գորիսի բարբառի ածանցների պատմական շերտերը. արդյո՞ք այս բարբառը ածանցման եղանակներով հեռացել է ընդհանուր հայերենի զարգացման ուղեծրից։ Այս մեթոդը, կարծում ենք, թույլ է տալիս նաև որոշելու Գորիսի բարբառի՝ բնիկ տարածքում գոյատևելու ժամանակաշրջանը։

Բ. **Ածանցների դասակարգում և քերականական ուսումնասիրություն:** Գորիսի բարբառում հանդիպող ածանցները դասակարգվել են ըստ իմաստաբանական, խոսքիմասային բնութագրերի, որպեսզի հնարավոր լինի պարզել դրանց հիմնական առանձնահատկությունները բառակազմական և ձևաբանական տեսանկյուններից։ Ածանցները բաժանվել են ըստ իրենց գործառույթների (բերված են կենդանի խոսքից օրինակ - նախադասություններ)՝ առանձնապես հաշվի առնելով հոմանիշներն ու տարբեր բարբառներում առկա տարբերակները։

Գ. **Համեմատական լեզվաբանական վերլուծություն:** Քննության ենք առել Գորիսի բարբառի ածանցները՝ համեմատելով այլ

---

[2] Մասնավորապես՝ **Մարգարյան Ա.,** Ս. *Գորիսի բարբառը,* Ե., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1975, էջ 570: **Գալստյան Ս. Ա.,** *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում,* Ե., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1978, էջ 327: **Քումունց Մ.,** *Հականունության ձևավորման ածանցական միջոցները նույնարմատ և տարարմատ բառերում,* 2019, էջ 15: **Ջահուկյան Գ.**, *Հայերեն ստուգաբանական բառարան,* Ե., «Ասողիկ» հրատարակչություն, 2010, էջ 820: **Քումունց Մ.,** *Գորիսի բարբառը հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգման համատեքստում,* Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրհյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ։ Միջազգային գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակչություն, Ե., 2022, էջ 314: **Ջահուկյան Գ. Բ.**, *Հայ բարբառագիտության ներածություն,* ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Ե., 1972, 347 էջ:

բարբառներում (Մեղրի, Հադրութ, Արցախ, Կապան, Սիսիան) առկա համապատասխան ձևերի հետ՝ հասկանալու բարբառիս ինքնուրույնությունը և յուրահատկությունները: Սա նաև թույլ է տալիս ավելի լայն հայացքով դիտարկել հայերենի բարբառային համակարգում Գորիսի բարբառի դիրքը:

Դ. **Ձևաբանական կառուցվածքի և զարգացման վերլուծություն:** Ուսումնասիրվել է Գորիսի բարբառի ածանցային համակարգը՝ պարզելու, թե ինչպիսի ազդեցություն են ունեցել ածանցները բարբառի բառապաշարի հարստացման վրա: Հատուկ ուշադրություն է դարձվել այն հանգամանքին, թե ինչպես են տարբեր ածանցներ նպաստել բարբառի ձևաբանական համակարգի զարգացմանը:

Ե. **Տվյալների վերլուծություն և ներկայացում:** Այս մեթոդի արդյունքում կստեղծվի ընդհանուր պատկերացում այն մասին, թե ինչպիսի դրսևորումներ ունեն ածանցները Գորիսի բարբառում, ինչպես են դրանք հարստացրել լեզուն՝ ստեղծելով նոր բառային ձևեր և նշանակություններ:

Քննարկում

Գորիսի բարբառի բառային կազմը զգալիորեն հարստացել է ածանցման միջոցով, «նրա ընդհանուր բառապաշարի մեկ քառորդը ածանցավոր բառեր են, որոնց մի չնչին մասը՝ նախածանցով, իսկ մեծագույն մասը վերջածանցով է կազմվել»[3]:

Նախածանցներից գործածական են հիմնականում **ան** - և **չ** - ժխտական ածանցները:

Ս. Գալստյանը հայերենի **ան-** նախածանցին վերագրում է գործառական երկու հատկանիշ՝ ա. **ան** - ը որպես նախատիպ հիմքի

---

3 **Մարգարյան Ա.**, *Գորիսի բարբառը,* Ե., Երևանի համալսարանի հրատ., 1975, էջ 259:

առաջին բաղադրիչ **(անամոթ - աբար)**, բ. որպես նախատիպ հիմքի կամ արմատի սկզբանամաս **(ան - ազատ)**[4]: **Ան -** նախածանցը բարբառումս հիմնականում դրսևորվում է ձևույթային – բառակազմական մեկ հատկանիշով, այսինքն՝ կան ածանցավոր բառեր, որոնք կազմվում են միայն ածանց+արմատ կաղապարով, օր.՝ **անթիլ «առանց թել», անկէռիք «առանց ատամ»** և այլն: Նկատում ենք, որ սրանք բառակազմորեն չեն ծավալվում, ինչպես՝ **անշառ «անվնաս», անհամ «համ չունեցող», անտակ «հատակ չունեցող, անսահման», անքաշ «անկշիռ», անխրրատ «չխրատված»:** Իմաստաբանորեն յուրահատուկ կառուցվածք ունեն **անիրէս, անխէլք** և նման բառեր, որոնցում **ան** - ը արտահայտում է ոչ թե ժխտում, այլ նոր հատկանիշ է վերագրում բառին, ինչպես՝ **ան - խէլք** նշանակում է ոչ թե «խելք չունեցող», այլ «**հիմար**», **ան - իրէս**՝ ոչ թե «երես չունեցող», այլ «**անամոթ**»: Օր.՝ **Անիրէսի** մընը տ*ռ*ւս յէկու: Բառերի մեծ մասը իմաստաբանական կառուցվածքով տարբերվում են մյուսներից, այն է, որ **ան** - ը միանգամից ժխտում է բառը, ինչպես՝ **անձ*ռ*ր «առանց ջուր», անտէղի «անիմաստ», անդար || անդէր «անտեր», անքօն «անքուն», անդարդ «առանց դարդ»:** Օր.՝ Սաղ քիշէր քօն չիլ*ա*ղ, **անքօն** ա: **Անտէղի** ք*ա*ց պ*ա*նի մէջ ինգէց:

Ան- նախածանցի հաճախականության և արագաբանության հետևանքով մի քանի բառեր կորցրել են ածանցի **ն** հնչյունը, ինչպես՝ **ախուս || ախօս (անխոս), ասաս,** նաև՝ **անսաս «անձայն»** և այլն, որը առանձնապես բնորոշ չէ հայերենի մյուս բարբառներին:

Չ- նախածանցով բառերը բաժանվում են երկու խմբի՝ ըստ կազմության՝ **ա**. *բառեր, որոնցում* **չ - ն** *կցված է ինքնուրույն գործածություն չունեցող արմատին՝* **չը - խօս (լուռ), չը - կամ «չկամեցող», չը - գիթկը «հանկարծակի, անգիտակցորեն, պատահական»,**

---

[4] **Գալստյան Ս. Ա.,** *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում,* Ե., Երևանի համալսարանի հրատ., 1978, էջ 189:

չրպէր(ք) «չբեր», բ. *ինքնուրույն գործածվող ձևերին՝* **չրխօսկան «լուռ», չրկէր «չուտող», չրհաս «անհաս», չրմէթկը «դժկամ», չրտէս** և այլն: Օր.՝ Հունց էն է **չրտէսի** նրման թրմաշա անում: **Չրխօսկան** խօխայա, մըն ս*ա*ս չի անում: Սրանցից հետաքրքրական է **չրգիթկը** կազմությունը, որ հավանաբար գրաբարից փոխանցված «գիտակ-ցել» բառի բարբառային տարբերակն է ժխտման կաղապարով, սակայն դրա դիմաց բարբառում բացակայում է «գիտակցել» բարդ կազմությունը, հմմտ.՝ **գիդ*ա*ղ*ա*վ - չրգիդ*ա*ղ*ա*վ**:

«Բարբառախումբը ոչ մի բառ չունի պարսկերենից անցած **ապ-, դժ-** ածանցներով: Դա խոսում է այն մասին, որ այդ ածանցները հայերենին անցել են հիմնականում գրավոր ճանապարհով, իսկ **ան** - ածանցի գործուն լինելը վկայում է, որ այն փոխառություն չէ»[5]:

Հաճախ օգտագործվում են նաև **տ-** և **բի - || բէ || բէյ || բը**[6] ածանցները: **S -** նախածանցը իմաստի մթագնմամբ պահպանվում է գրաբարից ժառանգված **տհալ** («չհալած, անմարս») > **տհալ** («ղավուրմա») բառում: Պարսկերենից Գորիսի բարբառը փոխ է առել **bi - բէ || բէյ || բը** ժխտական նախածանցը, որը և գործածվում է ոչ միայն փոխառյալ, այլև երբեմն հայերեն բառերի հետ, օրինակ՝ **բէհուշ || ըէհ*ուշ* «մոռացկոտ», բէյխ*ա*բ*ա*ր «bixäbar» «անտեղյակ», բէքէի «վատ տրամադրությամբ», բիյաբուռ «խայտառակ», բէշընօրք || բէյշընօրք «անշնորհք»** և այլն: Օր.՝ **Բէհուշ** պ*ա*ն ա, սաղ մըտան թըռնում ա: Աման հինչ*ա* **բէյխ*ա*բ*ա*ր** ապրում ա: Շէնումը **բիյաբուռ** էն ըրալ:

Կան բառեր, որոնք առանց **բէ -** ժխտական ածանցի չեն գործածվում, և կարող ենք եզրակացնել, որ դրանք քարացած ձևով

---

5 **Քումունց Մ.,** *Հականունության ձևավորման ածանցական միջոցները նույնարմատ և տարարմատ բառերում,* «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3, 2019, էջ 2:

6 Այն համապատասխանում է **ան-** նախածանցին:

են անցել Գորիսի բարբառին, ինչպես՝ **բէդամաղ «նեղացած, վիրավորված, վշտացած»**, այստեղից՝ **բեդամաղ անէլ, բեդամաղ ինէլ, բէդնամ «վատահամբավ, անպատիվ, անանուն»**, այստեղից՝ **բէդնամ անէլ «խայտառակել, վարկաբեկել, անվանարկել»:**

Որոշ բառերում ածանցը ոչ միայն տրոհվում է, այլև ունի **ան** - հայերեն ածանցով նույնարմատ հոմանիշները՝ **անբաշար «ան/մ/բաշար»** - **բեբաշար «բեյբաշար» > բեյբըբշըրը, աննամուս - բեյնամուս, անաբուռ - բէ/յ/աբուռ «առակ - պառակ», անբախտ - բէբախտ, անբախտութուն - բէբախտութուն, անաստըղ - բեյաստըղ «անաստղ, անհրապուրիչ», անլազաթ - բեյլազաթ «տհաճ, տհաճություն պատճառող, անհավես»**[7]:

Գորիսի բարբառում **վերջածանցները** բավականին շատ են: Դրանք տարբեր խոսքի մասերի պատկանող բազմաթիվ բառեր են կազմում:

✓ **-ալի || -*աղի*** - ածանցը տարածված է: Գ. Ջահուկյանը նշում է, որ այն հնդեվրոպական շրջանից է և ոչ թե հայկական նորագոյացում, կազմված է անորոշի - **(ա, ե)լ** - ով և - **ի** ածանցով[8]: Բարբառում էլ հաճախ այն հանդես է գալիս նաև - **ք** - ի հետ միասին՝ **օջախկ*աղ*իք «օջախին բնորոշ երևույթ», կըլխըկ*աղ*իք «գլխի գալիք», ըսէլիք, տալիք**: Գ. Ջահուկյանի ասվածը հավաստվում է այն բանով, որ այն հիմնականում հանդիպում է բնիկ հայերեն արմատներում՝ կազմելով ածականներ՝ «մի բանով առատ, հարուստ» լինելու նշանակությամբ՝ **մըսալի, կըթնալի, խուտալի, սըրտալի:** Օր.՝ Անխէլք հէյվանն էլ չիմ **յըղալի** թիքէքը ճոկըմ ա, մնացածը տամ ա հընգէրօնցը: Էն հըրէվանը **մըսալի** ապրանք էր մօրթալ: Գրական

---

[7] **Քումունց Մ.,** *Հականունության ձևավորման ածանցական միջոցները նույնարմատ և տարարմատ բառերում,* «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3, 2019, էջ 9:

[8] **Ջահուկյան Գ.,** *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., «Ասողիկ» հրատ., 2010, էջ 794:

հայերենում չհանդիպող և բարբառային տարածքում ստեղծված բառերից են՝ **իլբիհալի «անմիջապես», ըռխալի «մեծախոս», ըռըխկալի «կափարիչ», մըռըխկալի «մռայլ», յըղալի** և այլն:

Բարբառում հանդիպում ենք բառեր նաև ձևի նշանակությամբ, օր.՝ **ղըժժալի «ծիծաղելի», չըրըխկալի «չրխկոցով», իլբիհալի «անմիջապես»**, **խըռըմփալի «խռռացնելով», թըռռալի «արագորեն», վըրըխկալի «ուժեղ»** և այլն: Օր.՝ Հունց էն է **խըռըմփալի** քօն իլ*ալ*: Խոխէրքը **թըռռալի** նի տ*ատ*ան տօնը: Ճ*ու*րը **վըրըխկալի** կամ ա: Մերը օտում ա, աշկերը **իլբիհալի** պանվում ա:

✓ **-էլի || -իլի** - ածանցը կազմում է ածականներ ինչ - որ պետք է, կարելի է անել նշանակությամբ, օր. ՝ **կուրծելի, ճընընչէլի, հիշէլի || հիշիլի, մըռնէլի || մըռնիլի, ուտէլի || ուտիլի, ըսէլի || ըսիլի, իրէլի || իրիլի** և այլն: Օր.՝ Պըռըվներիս **մըռնէլի || մըռնիլի** վախտն ա: Մըհէկ **ուտէլի || ուտիլի** պանէր շատ կան: Էտ **ըսէլի || ըսիլի** խօսկէրք չէն, վէր ասում էս: Քին*ա* **իրէլի || իրիլի** փէդ պէր:

Ինչպես նկատում ենք, բարբառումս **ալի** և **էլի** ածանցները բառեր են կազմում ոչ միայն գոյականներից, այլև բայանուններից:

✓ **-ած** - «Ծագում է **ած - ել** բայի արմատից. հնարավոր է համարվում նաև գոյականակազմ **-ած** - ի հնդեվրոպական ծագումը՝ հնդ. **g´** > հայերեն **ծ** անցմամբ»:[9] Բայարմատի վրա դրվելով՝ կազմում է քիչ թվով ածականներ կամ գոյականներ ՝ իր վրա կրողի, ինչ - որ վիճակում գտնվողի նշանակությամբ, օր. ՝**բիզ*ար*ած «հոգնած», սոված «քաղցած», տ*ատ*ած «կատաղած», կըտաղած, պըլընգած «խեղճ», հըսած «հասուն»** և այլն: Օր.՝ Ժըղովուրդ մէր բուստանի խընձ*ո*ը թ*ա* հինչ **հըսած** ա, կէրաք: **Տ*ատ*ածի** մընն ա էդ կընէկը: **Պըլընգածի** տէս կաղնալա թըմաշայա անում:

---

[9] **Ջահուկյան Գ.**, 2010, էջ 794

✓ **-ակ || -*ակ*** - «Ծագում է իրանական **-ak** ածանցից, որ առկա է իրանական փոխառություններում՝ հաճախ առանց **-ակ** - ով ձևերի առկայության»[10]: Ածանցը, միանալով արմատներին, կազմում է տարբեր խոսքի մասեր՝ **ա**. գոյականներ՝ նվազական, փաղաքշական կամ բոլորովին մի այլ նշանակությամբ, օր.՝ **խէչակ «կարճ փայտ», պիոն*ակ* «մանգաղի մեկ հարվածով հնձանի ձեռքով բռնած քանակը», չըխարակ«ճախարակ», լըղարակ«արտի չվարած տեղ», վօրցակը || վէրցակը «աքլոր»** և այլն: Օր.՝ **Խէչակը** յէրկալան ք*ա*ցին մուսուրի: Լ*ա* լ*ու*սանում ա, **վօրցակը || վէրցակը** կանչում ա: **Ծիծէռնակը || ցիցէռնակը || ցըցէռնակը** պ*ու*ն ա տիր*ա*ղ կ*ու*մ*ու*մը: **բ.** ածականներ՝ սաստկացվող հատկանիշի նշանակությամբ, օր.՝ **ճըլօլակ «կախված, քաշ ընկած», կէնդակ «մենակ», ճօխտակ «երկվորյակ, զույգ», միչնակ || միջն*ակ* || միշն*ակ* «միջնեկ»** և այլն: **Ճօխտակ** ք*ու*ր օնի *ու*ր*ա*ն: **Միչնակ || միջն*ակ* || միշն*ակ*** ախպէրը հալա դըպրոցը պըրծալ չի:

✓ **-ական || -*ակ*ան, -կան || -կ*ա*ն** - «Ծագում է իրանական **-(a)kan** ածանցից. հաճախադեպ է իրանական փոխառություններում»[11]: Կազմում է՝ ա) ածականներ՝ ինչ - որ բանի կամ ինչ - որ մեկին վերաբերող իմաստով, ինչպես՝ **պըռըվական «պառավական», թաքավըրական, կըռվական, պապական** և այլն, մի բանի ունակ լինելու՝ **պըրտական || պարդական «պարտավոր», մըրսական, տիմ*ա*սկ*ա*ն «դիմացկուն», խըռօվկան «նեղացկոտ»**, և այլ նշանակությամբ, օր.՝ Վէր սկըսում չի **պըռըվական** պ*ա*նէր ասէլը, նէրվէրիս ազդում ա: Գ*ու*դ*ու*մ ա թ*ա* **պըրտական || պարդական** էմ *ու*ր*ա*ն ք*օ*մ*ա*գ անեմ: Ա հինչ **խըռովկան** տ*ու*ս յէկիր տ*ու*: բ) գոյականներ՝ գործողի նշանակությամբ, օր.՝ Էդ հավը **թըխսական** ա, չմորթէք: Հօրը

---

[10] **Ջահուկյան Գ.,** 2010, էջ 794

[11] **Ջահուկյան Գ.,** 2010, էջ 794

նման ինքն էլ ա քացալ **վօրսկան || վօսկան || վէրսկան «որսորդ»** տառալ:

✓ **-ային** - Այն կազմում է մի քանի ածականներ, որոնք հիմնականում հանդես են գալիս տնական հատկանիշի նշանակությամբ, օր.՝ Էս տարի կարունքը **չուրային «չոր»** էր: Էգուց յէղանակը **թօռային || թուռային «անձրևային»** ա տուած:

✓ **-ան || -ան** - Կազմում է՝ ա) մի շարք գոյականներ՝ գործողի կամ գործիքի նշանակությամբ, օր.՝ **յէղան «խոտ հնձելու գործիք», կըղան «կաշվից գործած փոկ», կըրկատան, մէրան «մակարդ, մածնի»** և այլն: Օր.՝ Շօրէրս **կըրկատան** ըրա վէր կէնամ: **Յէղանը** ինձ տօր քինան խստը հըվաքէմ: Կազմվում է նաև «լ» - ի հավելմամբ, օր.՝ Էլի **ծակլան «ծակ»** շորէրը կէցալ ա յէկալ: բ) բազմաթիվ ածականներ՝ միայն գործողի նշանակությամբ, օր.՝ **կըծան «կծող», տըզզան «տզզացող», քըրքաշան «քաշքշող», լիփլատիան «շատ ուտող», թացան «կաթնեղեն»** և այլն: Օր.՝ Էս մարթը հինչ **լիփլատիան** տուս յէկու: Սանց շնէրը սաղ **կըծան** էն: Խանութի **թացանը** տուրը չի կամ:

✓ **-անդ** - կազմում է շատ քիչ գոյականներ՝ հավաքական նշանակությամբ, օր.՝ **ճըռավանդ «տանիքի հաստ գերաններրը», քօրղանդ «հարսի քողք», քըլլավանդ «փեշերը հավաքած»:** Օր.՝ **Ճըռավանդնէն** կուտրատալ ա, յէր տառալ: Շորէրը **քըլլավանդ** ա ըրալ, վէր կարա գործ անի:

✓ **-անը || -անը (<եան)** - այս ածանցը բարբառում շատ գործածություն չունի: Հիմնականումկազմում է սակավաթիվ մակբայներ՝ ժամանակի նշանակությամբ, օր.՝ **ամսանը, տարանը «երկու անգամ», օրանը «հինգ անգամ»**: **Տարանը** քինացալ ա ծօրը յէկալ: **Օրանը** արթէն յէր ա ինգալ:

✓ **-անի || -անի** - «Նկատի ունենալով - **անի** - ով բառերի գերակշիռ մասի հնդեվրոպական ծագումը և տողան - տողանի տիպի զուգահեռների առկայությունը կարելի է համարել

հայկական կազմություն՝ **- ան** ածանցով կամ հիմքային տարրով և **- ի** ածանցով»[12]: Կազմում է՝ ա) ածականներ՝ «ունեցող» նշանակությամբ, օր.՝ ***արժանի*** || ***արժանի***, **ըշկանի, կըլխանի, լ*ու*զվ*ա*նի(կ) «ճարտարախոս», վունդանի** և այլն: Օր.՝ Մարթ կուչվէլի ***արժանի*** || ***արժանի*** չի: Մըն **լ*ու*զվ*ա*նի(կ)** հարթնը օնէն: Տու քանի **կըլխանի** էս, վէր յէկալ էս: Սրանք սովորաբար գործածվում են թվականի կամ ածականի հետ: Բ) սակավաթիվ գոյականներ՝ գործիքի, նյութի նշանակությամբ, օր.՝ **մըտանի, կ'իրն*ա*նի «գարնանը ցանվող ցորեն»:** Օր.՝ **Մըտանին** գուդում չի շտէղ ա տիրալ:

✓ **-անուկ (<ան + ուկ)** - կազմում է մի քանի գոյականներ՝ մի բան առաջ բերողի նշանակությամբ, օր.՝ **Խըրխընջանուկ «որդ», շըրանուկ «շարան», մըծընանուկ «մարմնի մաշկի տակի խուլ», պըլանուկ «բույս»:** Օր.՝ Տախտէղը **շըրանուկ** ըրէն, կախ տուէն: Ք*ա*ց*ա*լ էն **պըլանուկ** քանդէն, կ*ա*ն:

✓ **-անուց || -*ա*նու*ց* || -անոց** - Կազմում է՝ ա) գոյականներ՝ տեղի և գործիքի նշանակությամբ, օր.՝ **խուտանոց «խոտերի տեղ», կիժանոց «գժանոց», շընանուց «շների տեղ», սըրանուց «ձիթահանք»** և այլն: Օր.՝ Կիպէրը տար ածի **խուտանոցը**: *Հա* քէզ նմաններին պիտի տանէն **կիժանոց**: բ) ածականներ՝ չափի ու արժեքի նշանակությամբ, օր.՝ **թընգանուց «թանկանոց», տրսսանուց «տասանոց», իժինանուց «էժանանոց», իրիքանուց «երեքանոց»** և այլն: Օր.՝ **Թընգա*նու*ց** նվէր էն ինքալալ: **Իժի*նանու*ց** պանէրը *սուրու*մ չի:

Բարբառիս որոշ խոսվածքներում գործածվում է նաև **- անց** ձևը, օր.՝ **հընանց «անցած տարվանից», շուտանց «վաղուց», ըռըվօտանց «առավոտվանից», սըրտանց** և այլն:Օր. ՝ **Ըռըվօտանց**

---

12 **Ջահուկյան Գ.,** 2010, էջ 797

շուտ ա տանան *տուս* յէկալ: **Հրոնանց** ապրանք էն ծախում խանութումը: **Շուտանց** էն *ուրուր* ճընանչում:

✓ **-անք || -*ա*նք** - «Ծագում է **-ան** բայահիմքային տարրից (կազմիչից)՝ **- ք** հոգնակերտով, որ ածանցական արժեք է ձեռք բերել»[13]: Բառեր է կազմում կրող և արգասիք առարկայի կամ գործողության անվան նշանակությամբ, օր.՝ **ապրանք, ըշխադանք «աշխատանք», չըրչարանք, ճըլօլանք «կախ ընկած բան», փըշրանք, ղանչա(ն)ք «աղաչանք»** և այլն: Օր.՝ Սաղ **ըշխադանքը** ստէղ - նէղ խարջում ա: Ինգ*ա*ծ մըղրկնէն սըրան - նըրան **ղանչա(ն)ք** ա անում: Կօռնըտ կօտրի, **ճըլօլանք** տ*ա*տն*ա*: Կազմում է գոյականներ նաև հոգնակի հավաքական նշանակությամբ, օր.՝ **ըշկըլ*ուս*անք «աչքալուսանք», կըտօրտանք «կտորներ», ծըտանք «մանր ձավար», տականք «որևէ բանի մնացորդը», ցիլ*ա*նքը || ցըլ*ա*նք «փայտի, ապակու, մետաղի մանր կտորներ»** և այլն: Օր.՝ Փէդի **ցիլ*ա*նքը || ցըլ*ա*նք** թռավ, աշկան կացավ: Տըղան բանակը պըրծալ ա, յէկալ, քինում են **ըշկըլ*ուս*անք** տան:

✓ **-աշ** - «Ծագումն անհայտ է. թերևս գալիս է ենթաշերտային ինչ - որ լեզվից»:[14] Կազմում է շատ քիչ ածականներ՝ նվազական հատկանիշի նշանակությամբ, օր.՝ **Թըթվաշ** պ*ա*նը աման մարթ կարում չի օտի: Վոշմնը **կըրմըրաշ** խընձ*օ*ղը չի:

✓ **-ավ || -*ա*վ** - «ծագում է գործիական հոլովի **-ով** վերջավորությունից»: Կազմում է՝ ա) գոյականներ, հատկապես ածականներ՝ «ունեցող» նշանակությամբ, ինչպես՝ **թանավ, կաթնավ, զ*ա*հմավ, տէսքավ, աստըղավ** և այլն: Օր.՝ **Թանավ** խաշիլը ս*ուրուս*մ չի: Մէր հըրէվանը փիս **զ*ա*հմ*ա*վ «ահարկու»** մարթ ա: **Կաթնավ** ճ*ա*շը

---

[13] **Ջահուկյան Գ.**, 2010, էջ 798

[14] **Ջահուկյան Գ.**, 2010, էջ 799

ամէնալ*ա*վ պ*ա*նն ա: բ) մակբայներ՝ ձևի կամ ժամանակի նշանակությամբ, օր.՝ **Քիշէրավ** վախում ա տանան տ*ռ*ս կա: Վօրօշալ էն **ցիրէկավ** քին*ա*ն ման կ*ա*լի:

✓ **-ավէն || -*ա*վէն** - կազմում է ածականներ նվազական կամ նմանողական հատկանիշի նշանակությամբ, ինչպես՝ **իրգին*ա*վէն «երկարավուն», կըրճավէն «կարճավուն», տըղնավէն «դեղնավուն», հըստավէն «հաստավուն»** և այլն: Օր.՝ Էտ ք*ա*նդիրը **կըրճավէն** ա իրովում: Խանութին կընանչին **տըղնավէն** էր աշկիս:

✓ **-ավէր || -*ա*վէր** - կազմում է բազմաթիվ ածականներ «մի բան ունեցող», «վրան կրող», գործողի անվան նշանակությամբ, ինչպես՝ **ըշխըդավէր «աշխատավոր», բախտավէր, ծըղկավէր, կէղծավէր, ճիթկավէր «ճտքավոր»** և այլն: Օր.՝ **Ճիթկ*ա*վէր** շ*օ*րէր չի կէնում: **Կէղծավէր** մարթան պիտի հէռու կէնաս:

✓ **-վէր || -վօր** - կազմում է գոյականներ, որոնք սկզբնական շրջանում ածականական նշանակություն են ունեցել և մեծ մասամբ գործածվում են **-վէր - ով**, ինչպես՝ **թաքավէր, կալվէր «կալ կալող», հանդվէր, հօնձվէր «հնձվոր»** և այլն: Օր.՝ **Թաքավէրը** սաղին ք*օմ*ա*գ* ըրէց: **Հօնձվէրը** գ*ա*ր*ա*նդ*ռ*ն ծէրքին քին*ա*ց հօնձ անի:

✓ **-ատ || -*ա*տ** - «Ծագում է հատ - անել բայի արմատից՝ հ - ի անկումով»[15]: Կազմում է ածականներ՝ մի բանից զրկված, պակաս լինելու նշանակությամբ, ինչպես՝ **ծէրատ «թերի», կէսատ «կիսատ», կըռնատ, պըռատ «կիսատ», ճըռնատ «կոնատ»** և այլն: Օր.՝ Խոխա վախտը յէր ա ինգ*ա*լ, իրէսը **ծէրատ** ա մնացալ: Գործէրը **կէսատ - պըռատ** ա անում: Տ*ա*սէրը սաղ **թէրատ** ա սվօրում:

✓ **-արան || -*ա*ր*ա*ն** - «Ունի իրանական ծագում. նկատում ենք իրանական փոխառություններում՝ զանձարան, զոհարան»[16]:

---

[15] **Ջահուկյան Գ.,** 2010, էջ 800

[16] **Ջահուկյան Գ.,** 2010, էջ 800

Կազմում է գոյականներ՝ տեղի, երբեմն նաև գործիքի նշանակությամբ, ինչպես՝ **աղութարանում || ըղութարան, ավիտարանը || ըվիտարանը || իվիտարանը || վիտ*ար*ան, ճրրըքարան «ճրագարան»** և այլն: Օր.՝ Սուրում ա քինա **աղութարանում || ըղութարանում** նստի: **Ավիտարանը || ըվիտարանը || իվիտարանը || վիտ*ար*անը** ռաչան մինչէվ վերչ կըրթացալ ա:

✓ **-արար || -*ար*ար** - կազմում է սահմանափակ թվով ածականներ ու գոյականներ՝ մի բան անողի, գործողի նշանակությամբ, ինչպես՝ **տընարար, կըռվարար, խըռուվարար «խռովարար», պին*ար*ար«գործարար»** և այլն: Օր.՝ Հայ ըղճըկօրցը նման **տընարար** կա վէչ: **Կըռվարարը** վէր լ*ա* յէկու, սաղ փախան:

✓ **-ացի || -էցի || -ըցէ** - «Կազմվել է հ. - ե. * - sko և * - iyo ածանցների բազայի վրա՝ նախորդող ձայնավորով կամ առանց դրա. տեղային իմաստը, ինչպես -ոց - ի դեպքում, զարգացել է հայերենում, եթե տեղի չի ունեցել * - tyo-ից ծագող ձևերի հետ բաղարկում»[17]: Կազմում է գոյականներ (երբեմն նաև ածականներ)՝ բնակչի ինչ տեղից ծագած լինելը ցույց տալու նշանակությամբ, ինչպես՝ **շին*ա*ցի, քարաշին*ա*ցի, տըթըվեցի, տըղըցէ** և այլն: Օր.՝ **Քարաշին*ա*ցիք** լ*ա*վ ժըղովուրթ էն: **Տըղըցէք** տօրքավ մարթիկ էն:

✓ **-ացու || -*ա*ց*ու*** - «Կազմված է -աց հիմքային տարրից և - ու ածանցից»[18]: Կազմում է գոյականներ և ածականներ՝ «մի բանի համար սահմանված, նախատեսված», «մի բանի հարմար եկող նշանակությամբ», ինչպես՝ **ըխպըրացու «եղբայրացու», մըսացու, շ*ու*ր*ա*ց*ու* «շորացու», մըրթացու «մարդ կոչվելու արժանի»** և այլն: Օր՝ Լավ **ըխպըրացուն** հազար պարէկամա լ*ա*վ ա: Աշկըս տէսավ մըն լ*ա*վ շ*ու*ր*ա*ց*ու*:

---

[17] **Ջահուկյան Գ.,** 2010, էջ 801

[18] **Ջահուկյան Գ.,** 2010, էջ 801

✓ **-էղէն || -էղան** - «Բաղկացած է - եղ և - էն տարրերից, որոնցից երկրորդը գալիս է իրանական ծագման - էն - ից, կամ -այն - ից՝ բարբառային հնչյունափոխությամբ»[19]: Կազմում է գոյականներ հավաքական նշանակությամբ, ինչպես՝ **ըրծըթէղէն || ըրծըթէղան, թըթվէղէն || թըթվէղան, պըղընձէղէն || պըղընձէղան** և այլն: Օր.՝ **Ըրծըթէղէն || ըրծըթէղանը** ահագին թնգացալ ա: **Թըթվէղէն || թըթվէղանը** տէնց էլ չսիրէց էլի:

✓ **-էնի(<ենի)** - «Հավանաբար ծագում է -եան և - ի ածանցների միացմամբ»[20]: Կազմում է ա) գոյականներ և ածականներ ծառերի, մրգերի և այլ տեսակների անվան նշանակությամբ, ինչպես՝ **ծըմըռնենի «ուշ հասնող և մինչև ձմեռ պահվող», պընդենի «խաղողի տեսակ», կըռըվկենի «ամուր», ըշունքենի «աշնանը հասնող»** և այլն, բ) զուտ ածականներ մի ինչ - որ հատկանիշ ստացած լինելու նշանակությամբ, ինչպես՝ **ծըխըլկենի «ձախլիկ», կըղըլկենի «կաղլիկ»**: Օր.՝ Մեր բուստանումը **ծըմըռնենի** լ*ա*վ խնձ*օ*ր կա: Վօշմնը ճօկալ չի վէր **ծըխըլկէնի** ա:

✓ **-էքան(<եքեան)** - «Կազմված է հ. ե. հոգնակի * - es վերջավորությունից ծագող -եք - ի և - եան ածանցի միացմամբ ու հետագա ընդհանրացմամբ»[21]: Կազմում է անձնական թվականներ, ինչպես՝ **իրէքան, չուրսէքան, ուխտէքան** և այլն: Օր.՝ **Իրէքան** մանդն էլ տ*ռ*ս էր ինգ*ա*ղ: **Ուխտէքանն** ալ տ*ա*սին խելունք չին մնում:

✓ **- ի || -է -** «Ծագում է հ. ե. * - iyo/ - ā - ածանցից. եթե -ի/ա - ով հիմքերի սեռական - տրական -ի - ն ծագում է հ. ե. * - iyo - ածանցից, ապա ծագմամբ նույնական է - ի ածանցի հետ»[22]: Կազմում է ա) ծառերի, բույսերի անուններ, որոնք գործածվում են թե՛ որպես

---

[19] **Ջահուկյան Գ.,** 2010, էջ 804
[20] **Ջահուկյան Գ.,** 2010, էջ 805
[21] **Ջահուկյան Գ.,** 2010, էջ 806
[22] **Ջահուկյան Գ.,** 2010, էջ 809

գոյական և թե՛ որպես ածական, ինչպես՝ **թոթի «թթենի», պէխի «անտառային ծառ», հոռի «ուռենի», հռնի «հոնի ծառ»** և այլն. բ)գոյականներ՝ անձի, իրի, կենդանու, խաղատեսակի և այլ անվան նշանակությամբ, ինչպես՝ **պապի, հիլի «հայելի», խրփէ «կափարիչ», պօլի «կանացի գլանաձև գդակ», քիշերի «կզաքիս», տունդի «հետույք»** և այլն, գ) ածականներ՝ կա՛մ մի բանի ինչից շինված լինելու, կա՛մ այլազան նշանակություններով, ինչպես՝ **ըրծաթի, պըղընձէ, մօտի «մոտիկ», կըթէ «կթի»** և այլն: Օր.՝ **Պէխի** փէդը լաՀվ պօղ օնի, **հոռին** էլ թըղթէ տէս ա էր ռում: Ղըզղանին **խրփէն** լաՀվ չի տիրաՀլ: **Ըրծաթի** թոխկան սուրռում ա կապի:

✓ **-իկ, -էկ** - Կազմում է ա) գոյականներ՝ նվազական, փաղաքշական կամ թե մի այլ՝ բառակազմական - քերականական նշանակությամբ, ինչպես՝ ածիկ, **իլիկ, կընէկ, հատիկ «ցորեն», պուժուրիկ «փոքրիկ կավե աման»** և այլն. բ) ածականներ՝ սաստկական, նվազական - փաղաքշական և այլ նշանակությամբ, ինչպես՝ **կարճիկ, խըլըշէկ «ականջները սրած, ցցած», կըրմըրթօշիկ «կարմրաթուշ», հաստիկ, տըպտըպուրիկ «խայտաբղետ»**, այլն՝ **լ** - ի հավելմամբ՝ **կօկլիկ «հարթ», թըմբըլիկ, ծախլիկ «ձախլիկ», նէղլիկ** և այլն: Օր.՝ Մեր տանը շուտվաՀնից քօհնա **պուժուրիկ** կա: **Տըպտըպուրիկ** վէրթ օնէն: **Նէղլիկ** ճընըպավը զօռավ էն անցկացալ:

✓ **-ին, -էն** - «Կարելի է ենթադրել ուրարտական ծագում»[23]: Կազմում է ածականներ ու մակբայներ, ինչպես՝ **սարքին «կանոնավոր», ծէքրծէքին «արշալույսը բացվելիս», մըթէն «մութ»** և այլն: Օր.՝ **Ծրքրծէքին** յէր ա կացալ քաՀցաՀլ:

✓ **-ինք** - Կազմում է գոյականներ, ունենք երկու օրինակ՝ **միչինք(<միջինք) «մեծ պասի միջին օրերը», քընինինք(<քնինք) «խոր մտմտանք»:**

---

[23] **Ջահուկյան Գ.,** 2010, էջ 807

✓ **-իչ || -իճ, -էչ** - Կազմում է գոյականներ (երբեմն նաև ածականներ)՝ հիմնականում գործիքի, սակավ՝ գործող անձի անվան նշանակությամբ, ինչպես՝ **ծէվիչ «գութանի ձևող և կտրող ձևիչ», պատիչ || պատիճ «պատուհաս», սրբտրհեռիչ «սրտացավ», քէրիչ, տրբաքիչ «բույս»** և այլն: Օր.՝ Տէն կացաք **սրբտրհէռիչ** ա տ*առաղ*: **Քէրիչը** ծէրքը կըտրալ ա:

✓ **-իք (<իք)** - անորոշ դերբայի վրա դրվելով՝ կազմում է գոյականներ կամ ածականներ՝ կատարելի գործողության նշանակությամբ, ինչպես՝ **ըսէլիք, ըռնէլիք, իրէլիք || իրիլիք, խըմէլիք, հըսնէլիք** և այլն: Օր.՝ **Ըսէլիքը** ասէց փախավ: Ուրան **հըսնէլիք** ապրուստը կարում չի ստանա:

✓ **-կօտ || -կուտ (<կոտ<ուկ+ոտ)** - կազմում է մի քանի ածականներ՝ մի ինչ - որ հատկանիշ ունենալու և նրանով աչքի ընկնելու նշանակությամբ, ինչպես՝ **վըխլըկօտ «վախկոտ», վախկուտ, հըմանչկուտ || հըմաշկուտ «ամաչկոտ», նըխանձկուտ || նըխազկուտ** և այլն: Օր.՝ **Վըխկըլօտի** մնը տուս յէկու: **Հըմանչկուտ || հըմաշկուտ** խօխայա հըրէվանին ախճիկը:

✓ **-հան, հանա, անա (<հան, հանա)** - կազմում է մակբայներ՝ ձևի կամ ժամանակի նշանակությամբ, ինչպես՝ **տըկըհան(ա) «տակից, արմատի մոտից», իրիս(հ)անա «երեսաանց», քըշըհանա || քըշանա «առավոտյան», ծընդըրրհանա || ծընդըրանա «լուրջ»** և այլն: Օր.՝ Ծառէրը **տըկըհանա** կըտրալ էն, յէր ածալ: **Քըշըհանա || քըշանա** ք*աղու* էնք ման կ*ա*նք:

✓ **-մունք, մանք (<մունք)** - կազմում է գոյականներ՝ բայանվանական նշանակությամբ, ինչպես՝ **ասմունք, ըրարմունք «արարմունք», չըրչարմունք, վարմունք, սրխալմունք**, այլն՝ **տանջմանք || տաժմանք, թըրթօրմանք «քրթմնջյուն»:** Օր.՝ Էս ըխճըկանը **ըրարմունքը** ինձ տուր չի կ*ա*մ: **Տանջմանքավ || տաժմանքավ** ա տօնը պահում:

✓ **-պան (<պան)** - կազմում է մի քանի գոյականներ՝ գործողի կամ գործիքի նշանակությամբ, ինչպես՝ **ճըղասպան || ճըղացպան «ջաղացպան», կըլապան «տաղավար», կըճապան**: Օր.՝ Մէր հըրէվանը քօհնա **ճըղասպան || ճըղացպան** ա իլ*ա*ղ: Մէծ - մէծ կընանիքը **կըլապանումը || կըլըպանումը** նստած զ*ու*ր*ու*ց էն անում:

✓ **-պատ, պատիկ (<պատ+իկ)** - կազմում է մակբայներ՝ չափի նշանակությամբ, ինչպես՝ **հազարապատիկ, հ*ա*ր*ու*ր*ա*պատիկ, իննըպատիկ, տըսսըպատիկ, չուրըքպատիկ || չուրսըպատիկ** և այլն: Օր.՝ Եթ*ա* մնը ինձ լըվ*օ*թ*ու*ն ա անում, յէս էլ *ու*ր*ա*ն **հազարապատիկն** էմ անում: Յէս մըհէտ խօսում էմ **չուրըքպատիկ || չուրսըպատիկ** լըսում:

✓ **-վասկ (<վածք<ուած+ք)** - կազմում է գոյականներ՝ գործողության արդյունքի, հետևանքի կամ հավաքական նշանակությամբ, ինչպես՝ **թըխվասկ «թխվածք», կըտօրվասկ «կոտորվելու արժանի արարածներ», կէցվասկ «կեցվածք», հինվասկ, նէղվասկ «նեղվածք», փէդվասկ «փայտեղեն»), քարվասկ «քարեղեն»** և այլն: Օր.՝ Իմ մամա լ*ա*վ **թըխվասկ** ա թըխում: Տէղը **նէղվասկ** էր չըկըրացին էրգ*ա*ն մնան:

✓ **-վարի (<վարի)** - կազմում է ածականներ կամ մակբայներ՝ ձևի նշանակությամբ, ինչպես՝ **իշ*ա*վարի«էշի պես», մուրթուվարի«մարդավարի», հայավարի, տընըվարի «տնավարի», տընըզըվարի «տնազի ձևով»** և այլն: Օր.՝Մէր հըրէվանը **մուրթուվարի** մարթ ա: Տուր չի կամ վէր կօխկան **տընըզըվարի** խօսում էն:

✓ **-տակ (<տակ)** - դրվելով քանակական թվականների վրա՝ կազմում է ածականներ և մակբայներ՝ չափի նշանակությամբ, ինչպես՝ **մէտակ «մեկ ծալքով», ըրկուտակ, իրիքտակ, չուրսըտակ, տըսսըտակ** և այլն: Օր.՝ Շ*օ*րը պիտի **մէտակ** քիցէս վէր նախշուն ինի: - Յօրղանը **ըրկուտակ** քիցի՛ վէր տաք ինի:

✓ **- տան, տի, դի (<տի)** - կազմում է քիչ թվով գոյականներ՝ գործիքի նշանակությամբ, ինչպես՝ **ըռըշկէտան || ռըշկէտան «առջևից կապվող գոգնոցի թելը», պընէտան || պինէտան «գութանի հաստ շղթա», տըրխատան || տըրխէտան «տրեխների անցքերով անցկացնելու թել»**, այլև՝ **պըռոշտի «համբույր», պուզտի «սրածայր», շիլդի «աչքերը ծուռ»** և այլն: Օր.՝ Մէր շէնի Գառնիկը **տըրխատանը || տըրխէտանը** պէնդ ա կապում: Մրհէկվա ջիհիլնէն վէր ուրուր տէսնում էն, **պռոշտի** էն անում:

✓ **-ու || -օ (<ու<ոյ)** - կազմում է հիմնականում ածականներ՝ մի բանի ենթակա լինելու կամ որևէ հատկություն ունենալու նշանակությամբ, ինչպես՝ **ծախու «վաճառելի», խըրարու «ինքնին աճած», խըտուրու || խուտուրու «անպետք», կըծօ || կըծու || կուծու**, այլև՝ **թըթօ || թըթու || թուրթու, խաշու «խաշած, խաշելու ենթակա»** և այլն: Օր.՝ Խանութին ըշխադողը **խըտուրու || խուտուրու** բալամ ա: **Թըթօ || թըթու || թուրթու** օտօղը օրիշ ա ինում:

✓ **-ուկ || -*ու*կ, օկ (<ուկ)** - կազմում է գոյականներ՝ այլ և այլ նշանակություններով, ինչպես՝ **ըվ*ուլ*ուկ || իվ*ուլ*ուկ || վուլուկ || ուվուլուկ «ավելուկ», կ*օ*թն*ու*կ «գորտնուկ հիվանդություն», խէժնուկ «ուտելու վայրի բույս», կաթնուկ«բույս», կաթուկ«կաթած, ընկած»**, այլև՝ **կըծըղօկ«դաշտային կծու բույս», կըրմըրօկ «կարմրուկ հիվանդություն», ծըլլօկ «բարակ հոսող աղբյուր»** և այլն: Օր.՝ Յէս գուդում էմ **կ*օ*թն*ու*կնէրը** վիրիցընէլի ճարը: Օխտը *ա*խպ*ու*րը միշտ **ծըլլօկ** ա կ*ա*մ:

✓ **-*ու*մ(նը) || -ում (<ումն)** - կազմում է մի քանի գոյականներ՝ գործողության անվան նշանակությամբ, ինչպես՝ **ուրթում(նը) «երդում», հարցում, կօլտում «մի անգամից կուլ տալը»:** Օր.՝ Կ*օ*ղը միշտ ***ու*րթ*ու*մ(նը)** ա օտում վէր տէնց պ*ա*ն չի ըրալ:

✓ **-ուն || -*ու*ն (<ուն)** - կազմում է գոյականներ ու ածականներ՝ «կրավորական անցյալ դերբայի նշանակությամբ», ինչպես՝

ծրպտուն || ծրպտօն «աննշան ջայն», ճրղօտուն «ջարդած փայտի կտոր», մաճուն, սիր*ռ*ն || ս*ռ*ր*ռ*ն, ցալքուն «ջրի ցայտյուն», նախշուն || նաշխուն, թաքուն, զ*ա*րթուն «արթուն» և այլն: Օր.՝ Վէր հէռախօս էն յէշում, **ծրպտուն || ծրպտօն** չէն հանում: Ճիրին **ցալքունը** սաղ ջանավն ա տուալ:

✓ **-ունք || -*ռ*ունք (<ունք)** - կազմում է մի քանի գոյականներ՝ մթագնած հոգնակի հավաքական նշանակությամբ, ինչպես՝ **հ*ռ*լ*ռ*ունք || հ*ռ*լունք, իր*ա*վ*ռ*ունք || ըրավունք**, այլն՝ **պապունք, մէրունք, ծէրունք, պէլունք«պելու ընտանիքը»** և այլն: Օր.՝ Մըհէկվա հարթները ասան **իր*ա*վ*ռ*ունք || ըրավունք** էլ օնէն: **Ծէրունք** շատ լավ ժըղօվուրթ էն:

✓ **-ուռ || -օռ (<ուռ)** - կազմում է սակավաթիվ գոյականներ, ինչպես՝ **հափուռ «բուռ», կըշկօռ || քըշկօռ «հանգույց»,** այլն՝ **ցէթուռ «մեզը պահել չկարողացող»:** Օր.՝ Բ*ա*զի մարդի **հափռում** աղ չկա: Օր.՝ Վէր տղա **ցէթուռ** ա, ընդ*ռ*ր տանում չէն բանակ:

✓ **-ուստ || -*ռ*ստ, -իստ (<ուստ, իստ)** - կազմում է մի քանի գոյականներ՝ գործողության արդյունքի կամ արգասիքի նշանակությամբ, ինչպես՝ **ապրուստ, հարուստ, հ*ա*նգիստ:** Օր.՝ Գյուղացու **ապրուստի** միջոցը կով պահիլն ա:

✓ **-ուտ || -*ռ*ուտ (<ուտ)** - կազմում է գոյականներ՝ մի բանով շատ հարուստ, առատ լինելու նշանակությամբ, ինչպես՝ **թէղուտ, թօթուտ, կաղնուտ, տանձուտ, ց*ա*ք*ռ*ուտ «մացառուտ»** և այլն: Օր.՝ **Թօթուտ** տէղը նըստէլ չէն: Մարթ կա վէր **ց*ա*ք*ռ*ուտ** խ*ռ*ութ*ռ*ումը պէտի նի կըրցընէս:

✓ **-ուրթ (<ուրդ)** - կազմում է սակավաթիվ գոյականներ՝ հավաքական նշանակությամբ, ինչպես՝ **ժըղօվուրթ || ժուղօվուրթ || ժօղօվուրթ, խորուրթ «խորհուրդ»**: Օր.՝ Դէ յէք **ժըղօվուրթ || ժուղօվուրթ || ժօղօվուրթին** կըլխե քիցի վէր յէս դուզ էմ:

✓ **-ք || -կ (<ք)** - կազմում է բազմաքանակ գոյականներ՝ մեծ մասամբ առանց որևէ նշանակություն արտահայտելու, ինչպես՝ **արկանք «երկանք», աշունք, լէնք «լայնություն», ծալք, կ'ատունք «գարուն»), հրրավէրք, հէնք, շալք, պէժինք «օժիտ», անիսկ «անեծք»** և այլն: Օր.՝ Մէնք փօխինձը **ըրկանքավ** էնք անում: Քօհնա պըռըվնէն փիս **անիսկ** տըվող էն իլալ:

✓ **-օթուն || -օթուն (<ութիւն)** - կազմում է մեծ թվով գոյականներ՝ վերացական, հավաքական կամ գործողության անվան նշանակությամբ, ինչպես՝ **պիցրօթուն «բարձրություն», մըծ(ծ)օթուն «մեծություն», պըկըսօթուն «պակասություն», թընգօթուն, կ'ուղօթուն «գողություն», նըմօթուն «խոնավություն»** և այլն: Օր.՝ Քէրծին **պիցրօթՆունը** մըն մէտըր ա: Մըհէկ **կ'ուղօթունը** վիրացած ա:

✓ **-օղ || -օղ || -ուղ (<ող)** - կազմում է գոյականներ կամ ածականներ՝ գործողի անվան նշանակությամբ, ինչպես՝ **գուղօղ «իմացող», կիրօղ || կուրօղ «գրող», յէկօղ || յէկուղ «եկող», օզօղ «ուզող»** և այլն: Օր.՝ Էրվօթունը **գուղօղ** պիտի: Ուրանց տօն **յէկօղ || յէկուղնէրը** շատ էն:

✓ **-օսկ || -ուսկ (<ոցք)** - կազմում է մի քանի գոյականներ՝ գործողության արդյունքի նշանակությամբ, ինչպես՝ **պըտրոսկ «փնտրտուք», մէրուսկ «մակարդած և դեռ չբացած մածուն», տօղուսկ «դողոցք»**: Օր.՝ Ինգած սէնյակնէն **պըտրոսկ** ա անում: Մըշքան ցօրտ ա **տօղուսկը** փըռնալ ա:

✓ **-օվի || -օվի(<ովի)** - կազմում է մի շարք ածականներ՝ մի բանի ենթակա լինելու, մի բանի հարմար գալու կամ համապատասխանելու նշանակությամբ, ինչպես՝ **ծըլօվի, թըկօվի, կըպօվի** և այլն: Օր.՝ Առաջվա **ծըլօվի** հէռախօսնէրն ա սուրում:

✓ **-օտ || -օտ, -ուտ || ուտ (<ոտ)** - կազմում է ածականներ՝ «ժամանակավորապես կամ մնայուն կերպով» «մի բան վրան, մեջը ունենալու» նշանակությամբ, ինչպես՝ **խուլխուլօտ «շատ խուլեր**

ունեցող», կըռըզնօտ «գանգուր», ճրպըռօտ, կըղաղուտ «կեղտոտ», մըզմազուտ և այլն: Օր.՝ Փիս **կըռըզնօտ** մազէր օնի: **Կըղաղուտի** մնը տ*ու*ս յէկու էն կընէկը:

✓ **-ոց, -ուց || -*ու*ց (<ոց)** - կազմում է, մեծ մասամբ բնաձայնական արմատներից, գոյականներ՝ բնաձայնության ու գործողության անվան նշանակությամբ, ինչպես՝ **բըղղոց, դըրնգոց, զըրնգոց, թըմփթըմփոց, խըշշոց, ծըկըլթոց «ճիչ», ճըղճըղոց, վըշշոց, տընքտընքոց** և այլն: Օր.՝ Մօրը **ծըկըթոցան** փիս վախում ա: Կօվին **բըղղոցը** սաղ շէնավը լսվում ա:

Նշվածներից բացի Գորիսի բարբառում կան նաև.

ա) **մասնավոր գործածություն ունեցող կամ քարացած բառաձևերում պահպանվող ածանցներ,** ինչպես՝ **- աց** (ծէռաց < ձէռաց), **- ալ || էլ<եալ** (մէռալ || մէռէլ <մեռեալ), - **ասկ < ացք** (արմասկ < արմացք, թըռըմասկ < թերմացք), **- ութ || ութկ<ոյթ** (սովօրութ || սուվօրութկ < սովորույթ), **- օնք<ոնք** (կըռճօնք || կըրճօնք<կռճոնք), **- ման<ման** (ճեռման<եռման), **- *ու*շ<օճ** (փըրթ*ու*շ || փիրթ*ու*շ || փ*ու*րթ*ու*շ<բրդոճ) և այլն:

բ) **Թուրքերենից փոխառյալ ածանցներ՝**

✓ **-չի || -ճի** - փոխառյալ բառերից (օրինակ՝ դամիրչի, զարափաթչի, թալանչի և այլն) բացի, հայերեն բառերի վրա դրվելով՝ կազմում են գոյականներ կամ ածա - կաններ՝ մի բան անողի, գործողի նշանակությամբ, ինչպես՝ **նախըրչի «նախարապան», թըքուչի «գոլ», խայտառակչի, քարքանչի «քարքանդչի»**, այլն՝ **ժէշտանչի «երկաթագործ», փօղրաթչի «կապալառու»** և այլն: Օր.՝ Գյուղին **նախըրչին** ալկաշ պ*ա*ն ա: **Խայտառակչի** տէղավը ուրիշնէրին ա պ*ա*նէր ասում:

✓ **-լար || -լ*ա*ր** - թուրք. lär, որ նույնպես ոչ միայն փոխառյալ (օրինակ՝ աղալար, բալալ*ա*ր), այլև հայերեն բառերի հետ է գործածվում՝ կազմելով հոգնակիհավաքական նշանակությամբ

ցեղի, տոհմի անուններ, ինչպես՝ **խիլ*օ*ար || խռլ*օ*ար, մանուկլ*ա*ր, արզումանլար, զանիլ*ա*ր, պիծ*ա*նլ*ա*ր** և այլն: Օր.՝ Իմ տատիկ **պիծ*ա*նլ*ա*ր**ան ա:

✓ **-լու || -լ*ու*** - թուրք. lü - որ նույն ձևով ոչ միայն փոխառյալ (օրինակ՝ ***ամ*ալլ*ու* «եսասեր»**) բառերի վրա դրվելով՝ ածականներ կամ մակբայներ է կազմում, ինչպես՝ **կ*օ*ղլ*ու* (կէնալ) «դարան մտնել», *ա*հլ*ու* «ահավոր»: Կ*օ*ղլու** կընալավ ապրում ա ստէղ - ընդէղ:

✓ **-ինջի - || -հինջի** - թուրք. inji, որ քանակական թվականների վրա դրվելով կազմում է դասական թվականներ, ինչպես՝ **մընինջի, էրկուինջի, վէցինջի, օթինջի** և այլն: Թեև Գ.Ջահուկյանը Գորիսի բարբառում նշում է **-ինջի** ածանցի առկայությունը, սակայն ափն իսպառ բացակայում է[24]: Անցյալ դարի 60 - 70 - ական թվականներին **- ինջի** ածանցի երբեմնի գոյության և դուրսմղման, ապա **- րորդ || - երորդ** ածանցի գործառման վերաբերյալ արդեն արձանագրում կա «Գորիսի բարբառում»[25]:

Եզրակացություններ

Այստեղ ներկայացնում ենք, թե Գորիսի բարբառը ինչքանով է նման մյուս բարբառներին և համեմատում ենք մի քանի ածանցավոր բառեր: Նմանության դեպքում դնում ենք «+» նշանը, իսկ տարբերության դեպքում՝ «-»:

---

24 Այս մասին տե՛ս՝ **Ջահուկյան**, ՀԲՆ, էջ 87:

25 **Քումունց Մ.,** *Գորիսի բարբառը հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգման համատեքստում,* Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրհյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ, Միջազգային գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., Ե., 2022, էջ 263:

N	Գորիս[26]	Մեղրի	Հաղրութ	Արցախ՝ ըստ բարբառակրի	Արցախ՝ ըստ բառարանի[27]	Կապան	Սիսիան
1.	Ան - անիրէս	+	+	+	-	+	+
2.	անտէղի	+	-	+	+	+	+
3.	Չ - չրհաս	+	-	-	+	-	-
4.	չրկէր	+	-	-	-	-	-
5.	Բէ - բիյաբուռ	+	+	+	+	+	-
6.	բէքէփ	+	-	+	+	+	+
7.	- ալի/*ա*ղի - ըռխալի	-	-	+	-	+	-
8.	ճիր*ա*ղի	+	+	+	+	-	+
9.	- ալի/էլի -ճընընչէլի	+	-	+	-	-	-
10.	տրսնալի	+	-	+	-	+	-
11.	- ած - կրտաղած	+	+	+	+	+	+
12.	պրլրնգած	-	-	+	+	-	-
13.	- ակ/*ա*կ - խէչակ	+	-	+	+	+	+
14.	ճօխտակ	-	+	+	+	+	-
15.	- ական/*ա*կան - պրռրվական	-	-	+	-	-	-
16.	մրրսկան	+	-	+	+	+	+
17.	- ային - չուրային	-	-	+	-	+	-
18.	թօռային || թուռային	-	+	+	-	+	+
19.	- ան/*ա*ն - կրրկատան	+	+	+	-	+	-
20.	լիփլ*ա*փ*ա*ն	-	+	+	-	-	-
21.	- անդ - ճրռավանդ	-	-	+	-	-	-

26 Տվյալների բացակայության պատճառով աղյուսակում չենք տեղադրել Բուրդուրի, Շամշադին – Դիլիջանի և մյուս բարբառների օրինակները:

27 **Սարգսյան Ա.,** *Ղարաբաղի բարբառի բառարան,* Արցախի պետական համալսարանի հրատ., Ե., 2013, էջ 846:

22.	քօրդանդ	-	-	+	-	-	-
23.	- անի/*ա*նի - կըլխանի	-	-	+	-	+	+
24.	լ*ու*զվ*ա*նի(կ)	-	+	+	-	-	+
25.	- անուկ - խըրխընջանուկ	-	-	+	+	-	-
26.	պըլանուկ	-	-	+	+	-	-
27.	- անուց/ան*ու*ց - խուտանուց	+	+	+	+	-	-
28.	իժին*ա*ն*ու*ց	-	+	+	-	-	-
29.	- անց - ըռըվօտանց	+	+	-	-	-	-
30.	սըրտանց	+	+	+	+	+	+
31.	- անք/*ա*նք - ըշխադանք	+	+	+	-	+	+
32.	Տականք	-	-	+	-	-	-
33.	- աշ - թրթվաշ	+	+	+	+	+	+
34.	կըրմըրաշ	-	+	+	-	-	-
35.	- ավ/*ա*վ - թանավ	+	+	+	+	+	+
36.	ցիրէկավ	+	+	+	+	+	-
37.	- ավէն/*ա*վէն - կըրճավէն	+	-	+	-	+	-
38.	տրընավէն	-	+	+	-	+	-
39.	- ավէր/*ա*վէր - ճիթկ*ա*վէր	-	+	+	-	+	-
40.	ծըղկավէր	-	+	+	-	+	+
41.	- ատ/*ա*տ - ծէրատ	-	-	+	+	-	+
42.	կըռնատ	+	-	+	+	+	+
43.	- կօտ/կուտ - վըխլրկօտ	-	+	+	+	+	-
44.	մուռասկուտ	+	-	+	+	-	-
45.	- վարի - մուրթուվարի	+	+	+	-	-	-
46.	տրնավարի	+	-	+	-	-	+
47.	- ացի, - էցի, - ըցէ - քարաշին*ա*ցի	-	+	+	-	+	-
48.	տրղրցէ	-	+	+	-	-	-

49.	- ացու/*ա*ցու - մըսացու	+	+	+	+	+	+
50.	*շ*ուրացու	-	+	+	+	+	-
51.	- մունք/մանք - ըրարմունք	+	+	+	+	+	+
52.	թըրթօրմանք	-	-	+	-	-	-
53.	- էնի - ըմըռնէնի	-	+	+	-	-	-
54.	ծըխըլկէնի	-	+	+	-	-	-
55.	- էքան - իրէքան	-	+	+	+	+	+
56.	ուխտէքան	-	+	+	+	-	-
57.	- ի/է - հոռի	+	+	+	+	-	+
58.	Խըփէ	-	+	+	+	-	-
59.	- իկ, էկ - կընէկ	+	+	+	+	-	+
60.	տրպտրպ*Բ*ւրիկ	-	+	-	-	-	-

Ստորև ներկայացնում ենք Գորիսի բարբառի ածանցների և Մեղրու, Հադրութի, Արցախի, Կապանի և Սիսիանի բարբառների ածանցների վիճակագրական աղյուսակը՝ Գորիսի բարբառի նմանությունների տոկոսային հարաբերակցությունը մյուս բարբառների հետ:

Բարբառներ	Բառերի քանակը համապատասխանում է	Տոկոսային հարաբերակցություն
Մեղրի	29	48,3%
Հադրութ	36	60%
Արցախ՝ ըստ բարբառակրի	56	93,3%
Արցախ՝ ըստ բառարանի	29	48,3%
Կապան	30	50%
Սիսիան	23	38,3%
Գորիս	60	100%

Գալիս ենք այն եզրակացության, որ Գորիսի բարբառը ավելի շատ մոտ է Արցախի բարբառին՝ 93,3%: Իսկ եթե հաշվի առնենք բառարանի և բարբառակրի արդյունքների տարբերությունը, ապա տեսնում ենք, որ մոտ է Հադրութի բարբառին՝ 60%:

Ցուցանիշների պատկերը՝



Օգտագործված գրականության ցանկ

1. Մարգարյան Ա. Ս. Գորիսի բարբառը: Երևան: Երևանի համալսարանի հրատարակչություն: 1975: էջ 570:

2. Գալստյան Ս. Ա. Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում: Երևան: Երևանի համալսարանի հրատարակչություն: 1978: էջ 327:

3. Քումունց Մ. Հականունության ձևավորման ածանցական միջոցները նույնարմատ և տարարմատ բառերում: 2019: էջ 15:

4. Ջահուկյան Գ. Հայերեն ստուգաբանական բառարան: Երևան: «Ասողիկ» հրատարակչություն: 2010: էջ 820:

5. Քումունց Մ. Գորիսի բարբառը հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգման համատեքստում: Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրհյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի

վիճակ, միտումներ և մարտահրավերներ: Միջազգային գիտաժողովի նյութեր: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակչություն: Երևան: 2022: էջ 314:
6. Ջահուկյան Գ. Բ., Հայ բարբառագիտության ներածություն, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1972, 347 էջ:

Qumunc Mher, Babayan Arine - **Derivatives in the Goris dialect.-** Our study is devoted to the derivation and the examination of suffixes in the Goris dialect. Throughout the study and description of each suffix, we considered it necessary to present relevant examples with each suffix and give their explanations. Studying the suffixes in the Goris dialect, we see that they have given numerous new meanings to words and have their own characteristics. The Goris dialect has its own rich derivation system, through which the dialect vocabulary has been enriched.

Keywords: suffix, dialect, Goris, word meaning, word formation

Кумунц Мгер, Ваваян Арине - **Производные слова в Горисском диалекте.-**Наше исследование посвящено образованию и рассмотрению суффиксов в горисском диалекте. В ходе всего исследования и при описании каждого суффикса мы сочли необходимым привести соответствующие примеры и дать пояснения к их особенностям. Изучая суффиксы в горисском диалекте, мы видим, что они придали словам ряд новых значений и обладают особыми особенностями. Горисский диалект имеет богатую словообразовательную систему, благодаря которой обогатился словарный запас диалекта.

Ключевые слова: суффикс, диалект, Горис, значение слова, словообразование.